ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԵՅ Բ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

Մոսկվա

Ուրախությամբ ստացանք բարի լուրը, որ Աստուծո ողորմությամբ ընտրված եք Պատրիարք համայն Ռուսիո և Մոսկվայի Ռուս Պրավոսլավ Սուրբ Եկեղեցվո և 10 հունիսին տեղի է ունեցած մեծ հանդիսությունը Ձեր գահակալության փառավոր արարողությանց:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և մեր հավատացյալ ժողովրդի, Հայաստանի և արտասահմանի, ներկայացնում ենք Ձեզ Մեր հարգալից ողջույնը և ամենաբարի մաղթանքները, որ Տերը Ձեզ շնորհի երկար տարիների կյանք և երկնային ներշնչանքներ, որպեսզի Ձեզ հատուկ իմաստությամբ և հոգեկան եռանդով, կրոնական լուսավոր իրագործումներով փառավորեք Ռուս Պրավոսլավ պատմական Եկեղեցին ի հոգևոր շինություն ձեր հավատավոր ժողովրդի կյանքի:

Բնական է, շատ ենք ցավում, որ անձամբ կարող չեղանք մասնակցելու գահակալության հանդիսությանց, Ձերդ Սրբությանը ծանոթ պատճառներով, սակայն վստահ եղեք, թե Մեր աղոթքները Ձեզ հետ են, և առաջին իսկ Ձեզ հարմար առիթով երջանիկ պիտի լինենք Մոսկվայում լինելու և Ձեզ հետ ողջագուրվելու եղբայրական սիրով ու հարգանքով:

«Ամենայն ինչ Ձեր սիրով եղիցի»:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 հունիսի 1990 թ.